ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/300

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Շողիկ» Ա/Կ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/75» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Արաբկիր վարչական շրջանի հենապատերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17246-2021 գրությամբ «Շողիկ» Ա/Կ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 14.10.2021թ.-ի թիվ 01/61-24895 գրության հիման վրա, 21.10.2021թ.-ին «Շողիկ» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 21.10.2021թ.-ին:

22.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/300 համարի ծածկագիրը:

26.10.2021թ.-ին և 19.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.11.2021թ.-ին:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.10.2021թ.-ի թիվ 01/61-24895 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/75» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնման հայտ է ներկայացրել «ՇՈՂԻԿ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ (այսուհետ՝ Մասնակից):

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտը գնահատելիս 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով արձանագրել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ և օրենքով սահմանված կարգով Մասնակցին առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից օրենքով սահմանված ժամանակահատվածում ներկայացված շտկված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքում, ողարկվել են թերի և ոչ ամբողջական. մասնավորապես իրական շահառուների մասին հայտարարագիրը/հավելված

1.2/ չի վավերացվել թվային էլեկտրոնային ստորագրությամբ, ինչպես նաև հայտարարագրում չեն լրացվել 4.5 (ա, 4.5.1 և 4.5.2) և 4.7.3 դաշտերը:

Հաշվի առնելով, որ Մասնակիցը խախտել է հրավերով ստանձնած պարտավորությունը՝ հիմք ընդունելով հրավերի 8.2 և 8.9 կետերը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, գնահատող հանձնաժողովը մերժել է Մասնակցի հայտը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/75» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Շողիկ» Ա/Կ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Շողիկ» Ա/Կ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.10.2021թ.-ի գրությամբ դիմել է «Շողիկ» Ա/Կ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17246-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 23.10.2021թ.-ին ներկայացրած գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ներկայացնում եմ Շողիկ Ակ-ի (այսուհետ՝ Մասնակից) կարծիքը Երևանի քաղաքապետարանի կողմից ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/75 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացրած գնման հայտում թույլ տրված անճշտությունների վերաբերյալ.

Գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով արձանագրել է անհամապատասխանություններ, որի արդյունքում օրենքի սահմանված կարգով Մասնակցին առաջարկել է շտկել արձանագրված անճշտությունները:

Մասնակցի կողմից սահմանված ժամանակահատվածում այն շտկվել է և ներկայացվել գնահատող հանձնաժողովին, սակայն այն որակվել է թերի և ոչ ամբողջական, որի արդյունքում գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը գնահատել է ոչ գնային չափանիշներով 15 միավոր և գնային պայմաններով ըստ 1-ին և 2-րդ չափաբաժինների համապատասխանաբար 15,65217 և 20,07692 միավոր:

Մասնակիցը գնման գործընթացի արդյունքների ամփոփման արդյունքում գնահատող հանձնաժողովի որոշման հանձայն մասնակիցների ցանկում զբաղեցրել է վերջին տեղը, սակայն հանձնաժողովը ՀՀ կառավարության 526-Ն որոշման և Գնումների գործընթացի կազմակերպման կարգի համաձայն մերժել է հայտը:

Ելնելով վերոգրյալից հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցին տրված ոչ գնային և գնային չափանիշներին համապատասխան միավորները փաստացի Մասնակիցը լիարժեքորեն հանդիսացել է գնման գործընթացի մասնակից և Մասնակցի նկատմամբ կիրառելի չէ գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի պայմանները:»:

Մասնակիցը, 25.10.2021թ.-ին ներկայացրած մեկ այլ գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում իմ կողմից ներկայացված ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/75 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ կարծիքի լրացում.

Երևանի քաղաքապետարանի կողմից վերոհիշյալ ծածկագրով Armeps էլեկտրոնային համակարգում հրապարակված գնման մրցույթի հրավերի մեջ (հավելված 2) Մասնակցի կողմից ծառայությունների ձեռքբերման գինը պետք է առաջարկվեր մեկ չափաբաժնով, որն էլ ներկայացվել է իմ կողմից (340000 ՀՀ դրամ):

Սակայն հրավերի մյուս բաժինների ուսումնասիրությունից պարզվել է, որ գնային առաջարկը պետք է ներկայացվի երկու չափաբաժնով:

Հայտը չմերժվելու հիմնավորմամբ գնային առաջարկը ներկայացվել է նաև երկու չափաբաժնով, սակայն իմ կողմից թույլ է տրվել անճշտություն, մասնավորապես սխալ է նշվել գնման ծածկագիրը և ձեռք բերման գինը ներկայացվել է 360000 ՀՀ դրամ:

Գնահատող հանձնաժողովի կողմից անտեսվել է հրավերին համապատասխան հավելված 2 -ի գնային առաջարկը, և հիմք է ընդունվել սխալ ծածկագրի նշումով երկու չափաբաժիններով գնային առաջարկը:

Ելնելով վերոգրյալից, կարծում եմ գնահատող հանձնաժողովի կողմից պետք էր առաջարկվել վերացնել նաև այս անճշտությունը կամ էլ ընդունվեր հրավերին համապատասխան հավելված2-ով ներկայացված գնային առաջարկը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/300 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից Արաբկիր վարչական շրջանի հենապատերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 24.09.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/75» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Շողիկ» Ա/Կ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/75» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.10.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Շողիկ» Ա/Կ-ի կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը կցված չէ /համաձայն հավելավծ 1.2/: Ինչպես նաև «Շողիկ» Ա/Կ-ի կողմից հայտով ներկայացված մասնագետ՝ Մայիս Գառնիկի Ղազարյանի համաձայնագրում բացակայում է մասնագետի ստորագրությունը, ինչպես նաև նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝

գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Մասնակցի ներկայացրած նմանատիպ պայմանագրի գումարը պակաս է իր կողմից ներկայացված գնային առաջարկից:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցել «Շողիկ» Ա/Կ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 04.10.2021թ.-ին www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցի shoghik-ak@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովի 06.10.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Շողիկ» ԱԿ-ի կողմից շկտված փաստաթուղթը թերի է. մասնավորապես՝ իրական շահառուների մասին հայտարարագիրը /հավելված 1.2/ վավերացված չէ թվային էլեկտրոնային ստորագրությամբ, ինչպես նաև հայտարարագրում լրացված չեն 4.5 (ա, 4.5.1 և 4.5.2) և 4.7.3 դաշտերը:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի դրույթները, որոշել է մերժել «Շողիկ» Ա/Կ-ի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17246-2021 գրությամբ «Շողիկ» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Նույն ենթակետի «ժ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում՝ հայտերի գնահատման համար հրավերով պահանջված փաստաթղթերը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Արաբկիր վարչական շրջանի հենապատերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 24.09.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/75» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը

հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Արաբկիր վարչական շրջանի հենապատերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 24.09.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/75» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.10.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ հանձնաժողովն արձանագրել է, որ «Շողիկ» Ա/Կ-ի կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը կցված չէ /համաձայն հավելվածի 1.2/: Ինչպես նաև «Շողիկ» Ա/Կ-ի կողմից հայտով ներկայացված մասնագետ՝ Մայիս Գառնիկի Ղազարյանի համաձայնագրում բացակայում է մասնագետի ստորագրությունը, ինչպես նաև նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Մասնակցի ներկայացրած նմանատիպ պայմանագրի գումարը պակաս է իր կողմից ներկայացված գնային առաջարկից, ինչով պայմանավորված Հանձնաժողովը մեկ (1) աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է «Շողիկ» Ա/Կ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 04.10.2021թ.-ին www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցի shoghik-ak@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին: Սակայն Հանձնաժողովի 06.10.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Շողիկ» ԱԿ-ի կողմից շկտված փաստաթուղթը թերի է. մասնավորապես՝ իրական շահառուների մասին հայտարարագիրը /հավելված 1.2/ վավերացված չէ թվային էլեկտրոնային ստորագրությամբ, ինչպես նաև հայտարարագրում լրացված չեն 4.5 (ա, 4.5.1 և 4.5.2) և 4.7.3 դաշտերը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Շողիկ» Ա/Կ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/75» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է

Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17246-2021 գրությամբ «Շողիկ» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/300 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Շողիկ» Ա/Կ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**